ԿԿԱՅԱՆԱ «ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

24.05.2023 16:20

ՀՀ փաստաբանների պալատը, ՀՀ փաստաբանական ակադեմիան և Իրավաբանների հայկական ասոցիացիան կազմակերպում են «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» 12-րդ ամենամյա հանրապետական գիտաժողովը՝ «Փաստաբանի անկախությունը» խորագրով:

Գիտաժողովին կարող են մասնակցել ՀՀ ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետների և քոլեջների իրավաբանական բաժինների 2-րդ և բարձր կուրսերի ուսանողները, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդիրները:

Հայտերն ընդունվում են մինչև **2023թ. հունիսի 12-ը ներառյալ**: Գրանցումը կատարվում է առցանց՝ **այստեղ:**

Գիտաժողովի բանավոր փուլը կանցկացվի **2023թ. հուլիսի 14-ին:**

Գիտաժողովի հաղթողները կպարգևատրվեն խրախուսական մրցանակներով:

Գիտաժողովի մանրամասներին և զեկույցներին ներկայացվող պարտադիր պահանջներին կարող եք ծանոթանալ հետևյալ փաստաթղթերում.

- Գիտաժողովի ժամանակացույց
- Գիտաժողովի պաշտոնական կանոններ

Գիտաժողովի մասին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ կազմակերպությունների www.armla.am, www.advocates.am,www.advschool.am պաշտոնական կայքերում, իսկ զեկույցները ուղարկել՝ info@armla.am էլ.հասցեին:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել զանգահարելով 010 54 01 99 հեռախոսահամարով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })